

վերեւ կտցանման ծորակ մը՝ ուսկից ջուր կը հոսի: Ամբողջ անօթը կիտուածազարդ է:

Յնականապէս մեր մտքէն չի անցնիր յիշեալ բոլոր սպասները, զորս տեսանք ազնուականին կամ մեծատան տաճարին մէջ, երթալ որոնել նաեւ ռամկին կամ աղքատին սեղանին վրայ: Սա հարկաւ պիտի շատանար՝ անոցմէ անհրաժեշտ կտորներով, առանց փնդոելու անոնց բազմազանութիւնն ու գեղեցկութիւնը:



Ե. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Յառաջ չգնացած մեր նկարագրին մէջ՝ կարեւոր է հոս քանի մը խորհրդածութիւն:

1. — Կահուց հարազատութիւնը: — Նախկին չորս գլխոց մէջ՝ մեր թուած կահերըն ու սպասներ, — որոցմէ կրնան թերեւս դեռ անյիշատակ մնացած լինել նախնեաց մատենագրութենէն, կամ վրիպած ուշադրութենէս, — ամենամեծ մասամբ յիշուած գտանք ազգային հեղինակաց կամ թարգմանութեանց մէջ միանգամայն, եւ չենք տարակուսիր՝ թէ մեր նախնիք իրապէս ալ ունէին զանոնք: Իսկ զոմանս հանեցինք լոկ թարգմանուած երկերէ, որոց